



(Ը. Տարի) ԾԳՈՍՏՈՍ 1932

(8^{me} Année) Août 1932

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

ԴՐԻՍՏՈՍԻ ՓԱՌԱՌՐՈՒԹԻՒՆԸ ..

Հոգ. Կեանք

ՀՕՐՈՒԹԵԱՄԲ ԼԵՑՈՒԵԼՈՒ ՊԱՅ-

ՄԱՆՆԵՐԸ ..

ՏԱԿԵԱՊԻ ՊԱՆԵՐ ..

ՇՆՈՐՀԱՑ ԾՈՎԷՆ

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՍ ..

ԱՅՍՕՐՈՒԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ..

Ս. Գրական ռեսուրսներ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԸ ..

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Կենսագրական

ԿՈՄՍ ՅԻՆՑԷՆՏՈՐՖ ..

Խմբագրական

ՍԱՄՈՒԷԼ ..

Ազատ Թարգմ. Ն. Մ.

ՍԱՄՈՒԷԼ Պ.

ԱՐՄԵՆԱԿ ՕՍԿԱՆԵԱՆ

Թրգ. Վեր. Ն. ՓԱՓԱԶԵԱՆ

Ջ. Բ. ՊՈՒՏԱԿԵԱՆ

Բրոֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

X X X

Թուրքերենը ունի 8 էջ ո՛ր էլ ձեռքս չէր հասնում։ Թարգմանում էի և ալ տարբեր բովանդակությամբ։ Այս պարագան չի ընթերցում կուտայ որ թուրքերեն գիտցող մը անկէ ալ կընայ օգտուիլ։ Թուրքերէն մասի պատասխանատու խմբագիրն է՝

199809110018078042313

—2—

Արձնյի'ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելն.
ըէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

Ուրեմն ա'լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մտնելու խոստումնքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ աս.
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է'
պիտի գայ ու պի-
տի ջուշանայ:

Երբ. Ժ. 37

Ը. ՏԱՐԻ

ՕԳՈՍՏՈՍ 1932

ԹԻԻ 8

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
.....

ՔՐԻՍՏՈՍԻ ՓԱՌԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ

Բանը մարմին եղաւ ու մեր մէջ բնակեցաւ,
եւ Անոր փառքը տեսնեք: Յովհ. Ա. 14

Շատ դիրքին է ըմբռնել Քրիստոսի փառա-
ւորութիւնը, նկատելով Անոր մեծապահանգ
հեղինակութիւնը, Անոր սքանչելի քարոզութեան խո-
րութիւնը, Անոր հրաշագործութեանց շարքը, Ա-
նոր հեղինակաւոր վճիռները կեանքի բոլոր պա-
րագանքներու մասին, Անոր իշխանութիւնը բնու-
թեան եւ սատանայական բոլոր ոյժերու վրայ:
Այս պատճառաւ նաեւ դիրքին է հասկնալ որ
խնդրոյն մինչեւ խորը թափանցել չուզող և միա-
կողմանի մեկնող մարդիկ Քրիստոսի կեանքի
միայն վերջին երեք ու կէս տարիները նկատի
առնելով, անոր համաձայն կը համաչափեն: Ա-
նոր աստուածային գոյութիւնը եւ կ'ըսեն թէ
Յիսուս մկրտութենէն յետոյ աստուածայնացաւ:
Այս խորհուրդը հիմնովին սխալ է: Իրաւ է թէ
մեր Փրկիչը իր մկրտութենէն յետոյ օրինաւորա-
պէս գործի սկսած է եւ անկէ վերջն էր որ
աստուածային փառքը իր լեցունութիւնով յայտ-
նի եղաւ Անոր գործունէութեան մէջ, այսու ա-
մենայնիւ Անոր փառքը ի հնուց ըլլալով մէկտեղ
ի ծնէ ալ էր: Յիսուսի կեանքին բոլոր պարագա-
ները իրարու այնպէս մը ազդեցութեամբ են որ կա-
րելի չէ մէկը միւսէն զատել եւ մէկ պարագան
չեղեալ համարելով միւսը չանշեքացնել: Անոր յա-
րութիւնն ու համարաձուլմը և համարաձուլմէն յե-
տոյ ունեցած երկինքի բարձր քահանայապետա-
կան գործը աչքի ունենալով ըսինք՝ թէ համարա-
ձուլմը յարութեան բնական հետեւանքն էր, ինչ-
պէս նաեւ յարութիւնը Քրիստոսի ապրած կեան-

քին, եւ այսպէս ալ Անոր ապրած կեանքը Անոր
բարձր ծագումին միակ և բնական հետեւութիւնն
էր: Յիսուս Քրիստոս աստուածային է ի ծնէ, ա-
պա թէ ոչ չպիտի կրնար այդ կեանքի ընթացքն
ունենալ. ապա թէ ոչ կարելի պիտի ըլլար Քր-
իստոսի նման շատ մը անձեր գտնել աշխար-
հի վրայ, բայց ինքը մինակ կը մնայ իր փա-
ռաւորութիւնովը վասնզի մինակն է իր ծագու-
մովը: Այս ծագումը հետեւեալ կերպով կը տե-
ղեկագրուի մեզի, «Բանը» մարմին եղաւ: «Բան»ի
խորախորհուրդ ստուգաբանական նշանակու-
թեան չպիտի մտնենք, թերեւ Տէրը օր մը պա-
տենութիւն տայ մեզի այդ մասին անդրադառ-
նալու, բայց պիտի ջանանք այս անգամ իբր
մարդ երեւցողին, իբր մարդ Ապրողին, մեր մէջ
Բնակողին ու Գործողին փառքը տեսնել, ինչպէս
արդէն տեսան առաքեալները, ինչպէս տեսաւ
այն մէկը որ իր գլուխը Անոր կուրծքին վրայ
հանգչեցնելու քաղցր սովորութիւնն ու առանձ-
նաշնորհն ունէր:

Մարդկային պատմութիւնը տեսած է մեծ
հերոսներ, քաղաքական, զինական, գրական,
գեղարուեստական, կրօնական, որոնցմէ շատեր
խոնարհ ծագումէ մը բարձրացած են եւ մարդ-
կութեան առջեւ փառքէ ի փառք խոյացած,
բայց ժամանակ մը յետոյ հեղինակութիւն ըլ-
լալէ զաղրած եւ մոռցուած են: Ուրիշներ թաւալ-
զլը ինկան իրենց փառքէն, ուրիշներ որքան
շուտ բարձրացան այնքան շուտ շիջանեցան զի-
սաւորի մը նման լուսաւորելով եւ ժամանակի
խաւարին մէջ ընկղմելով:

Կան նաեւ ուրիշներ, որոնք խոնարհութեան
եւ զոհողութեան մէջ մեծ անուն շահեցան եւ
սակայն երբեք մեծ չեղան:

(1) Տես «Բանքեր» 1932 Մարտի եւ Ապրիլի խմբ.
բազրակոնները:

Այս երկնային անձը տարբեր է, Ինքը ի յաւիտեանից փառքի մէջ էր, բարձրագոյն գեներթին վրայ. նոյն փառքը պահեց իր աստուածային անձը ունայնալով եւ մարդկային կերպարանքի մէջ մտնելով՝ մարմին ու արիւն հագնելու պահուն ալ: Այդ փառքը կը տեսնենք Բեթլեհեմի մսուրին մէջ խանձարուրով փաթթուած մանուկին վրայ, տասներկու տարեկան իր ծնողաց հրեանազանդ Յիսուսին, Յորդանանի եզերքը գալով Յովհաննէս Մկրտիչի միջոցաւ արդարութիւնը կատարողին, Գեննեսարէթի ծովուն եզերքը պըտըտողին, աշխարհի վրայ գլուխը դնելու տեղ մը չունեցողին վրայ, մաքաւորներուն ու մեղաւորներուն հետ ուտող ու խմողին, Սուքարի հորին առջեւ ծարաւողին, Գեթսեմանիի պարտէզին մէջ արիւն քրտինք թափողին վրայ, ինչպէս նաեւ խաչին վրայ թեւատարած, բարեկամներէ եւ ազգէն լքեալին վրայ: Ծիշդ այդ միջոցին էր որ Հոովմայեցի հարիւրապետը խոստովանելու ստիպողականութեան տակ կը գտնուի, «Յիրաւի ասիկա Աստուծոյ Որդին էր»: Փառաւոր է Անիկա իր յարութեամբն ու համբարձումովը. փառաւոր է իր ներկայ փառքովը որ ի յաւիտեանից ունէր: Այս փառքը նոյնն է, անմարմին եղած ատենը եւ մարմինի մէջ եղած պահուն, երկինքի մէջ ու երկրի վրայ, տեսանելի եւ անտեսանելի վիճակի մէջ:

Այդ փառքը նախապէս իր նկարագրի սրբութեան մէջ կը կայանայ: Անիկա ոչ միայն սուրբ է (անմեղ ու անարատ), Սուրբն է, հապա չարին հանդէպ մշտակայ եւ անպարտելի յաղթականը, ու այս յաղթական կեանքը իր առաջին վայրկեանէն սկսեալ շարունակեց մինչեւ այն ժամանակ երբ նա գոչեց, «Ամէն բան կատարուեցաւ»: Այդ յաղթական կեանքին մէջ անիկա ոչ միայն բացասական կերպով, հապա ընդմիջտ անօրէնութիւնը ատեց եւ որոշ դիրք մը բռնեց անոր ընդդէմ: Դրապէս արդարութիւնը սիրելով եւ զայն կատարելով (Եբր. Ա. 9). ըրաւ նա ինչ որ հաճելի էր իր երկնաւոր Հօրը եւ գործեց ու խօսեցաւ Անոր հաճութեանը համաձայն. — Իմ վարդապետութիւնս իմս չէ, հապա Զիս զրկողինն է (Յովհ. Է. 16): Ես իմ կամքս չեմ փնտրեր, հապա Անոր կամքը որ Զիս զըրկեց (Յովհ. Ե. 30): Ես միշտ Անոր հաճելի եղած բաները կ'ընեմ (Յովհ. Ը. 29):

Անոր փառքը կը տեսնուի նաեւ իր սիրոյն մէջ, որ կը համէր ոչ միայն իր բարեկամներուն ու վաղեմի բարեկամներուն, իր աշակերտներուն, հապա նաեւ թշնամիներուն: Սիրեցէք ձեր թըշ-

նամիները, բարիք ըրէք անոնց որ ձեզ կը հաւածեն ըսողը իր գործնական կեանքով արդէն այդ հոգին ցոյց տուաւ ու ամէն օր ցոյց տալու վրայ էր: Ո՛չ միայն սիրելով իրենները, մինչեւ վերջն ալ սիրեց զանոնք, հապա նաեւ անոնց շարքին Յուդայի ալ ցոյց տուաւ նոյն սէրը, այնպէս որ աշակերտներու ներքին շրջանակին մէջ սկիզբէն մինչեւ վերջը յայտնի չեղաւ Յուդայի ի՛նչպիսի անձ մը ըլլալը:

Ի՛նչ գործի առատ հեղեղ մը կը տեսնենք կորսուած մեղաւորներու հանդէպ Յովհ. Է. 37ի մէջ. Տօնի վերջին մեծ օրը Յիսուս կայներ էր կ'աղաղակէր ու կ'ըսէր, եթէ մէկը ծարաւ է թող ինծի գայ: «Ես եկայ որ կեանք ունենան»: «Որդին մարդոյ եկաւ որ կորսուածը փնտռէ ու փրկէ»:

Անոր փառքը կը տեսնենք իր խոնարհութեան մէջ: Զինքը լսողները վկայեցին թէ մէկը Անոր պէս չխօսեցաւ: ուրիշներ կը զարմանային որ դպիրներուն ու փարիսեցիներուն պէս չէր խօսէր, հապա իշխանութիւնով կը խօսէր: Այսու ամենայնիւ իր փորձութեան օրերուն հակառակ Աստուածային հեղինակաւորութեան, իր կողմէն խօսք մը չխօսիր, Աստուծոյ խօսքէն, Հօրը վեկայութեան մէջ ձեռնարկներ կ'ընէ, «Դրուած է թէ ... գրուած է թէ... գրուած է թէ...» (Սաղ. ԺԼԸ. 2): Երբ թագաւոր օծելու համար ձեռք զարնելու կը մօտենան, անոնց զգացումները հանդարտեցնելէ յետոյ ինքը կը քաշուի անոնցմէ, աղօթելու որպէսզի Հայրը անոնց հոգեւոր աչքերը բանայ զինքը ճանչնալու: Տիեզերքի դատաւորը քահանաներուն ու փարիսեցիներուն, նոյնիսկ Հոովմայեցւոց առջեւ կը կայնի դատուելու եւ ինքզինքը չպաշտպաներ: Թագաւորաց թագաւորը Հերովդէսի առջեւ իր բերանը չբանար ի բաց առեալ տուած վկայութեան: Տիեզերքի Արարիչը աշխարհի վրայ տեղ մը չունի որ հոն իր գլուխը դնէ: Աշխարհի մարդոց հրաւէր կը կարգայ Եկէք... եւ ինձմէ սորվեցէք որ հեզ եմ եւ սրտով խոնարհ:

Թերթիս սեղմ սիւնակները չեն թուլատրեր մեզի խմբագրականի ձեռով մանրագնին կերպով քննելու Քրիստոսի սքանչելի կեանքին ամէն մէկ դրուագը, Անոր փառաւորութիւնը վերահանելու համար:

Այս խմբագրականով միայն պարզ ուղղութիւն մը կ'ուզենք ներկայացնել բոլոր Սուրբ Գիրքը ուսանողներուն եւ Քրիստոսի փառաւոր կեանքը ուսումնասիրողներուն:

Բայց հոս կուզենք պատասխանել այն հարցին, որ շատ մը միտքեր անհանգիստ ըրած եւ

զանոնք գայթակղեցուցած է Քրիստոսի մասին: Հարցումը այս է: Թե որ Քրիստոս Աստուած էր, ինչպէ՞ս կ'ըլլայ որ մարդկային օրէնքներու ենթարկուեցաւ, անօթեցաւ, ծարաւեցաւ, յոգնեցաւ, փորձուեցաւ, նոյնիսկ մեռաւ:

Նախապէս նկատի առնելու ենք թէ Աստուծոյ տիեզերական ծրագրին մէջ շատ մեծ տեղ կը գրաւէ եկեղեցին (ինչպէս արդէն տեսած ենք անցեալ թիւին մէջ): Ուստի նաեւ անհատ անձին փրկագործութիւնը, որ Իր արիւնով ի գործ դրաւ: Այս փրկագործութիւնը կատարել կարելի էր միայն Իրեն մարմնացումովը: Ուստի Բանը մարմին եղաւ, Փիլ. Բ. գլուխին մէջ կը կարդանք թէ Քրիստոս Աստուծոյ կերպարանքը ունենալով յափշտակութիւն մը չսեպեց, եւայլն:

Որպէսզի արդարութիւնը ի գործ դրուէր մեղքին ու մարդուն վրայ, հարկ էր որ Քրիստոս մարմնանար ու մարմնաւոր բոլոր օրէնքներուն հպատակէր, նոյնիսկ Իր կամքը բաւորովին հըպատակեցնէր Հօրը: Ինքը որ Աստուած էր, ինքզինքը դնելու էր այն սահմանափակ դիրքին մէջ որ աղօթէր (զոր նա ըրաւ մեզմէ աւելի) Գեթսեմանիին մէջ արիւն քրտինքի մէջ մտնէր, դատապարտուէր եւ խաչին անարգ մահովը մեռնէր: Միայն ու միմիայն այս միջոցով պիտի կրնար Աստուծոյ արդարութիւնը ի գործ դնել եւ մեղքին անէծքն ու իշխանութիւնը վերցնել մարդկային սերունդին վրայէն: Ասոր համար Իր բռնելիք դիրքը առաջուրէն Հօրը կողմէ որոշուած ըլլալով կատարեալ ազատութեամբ (Յովհ. Ժ. 18) ի գործ կը դնէ: «Վասնզի ես ինքիրմէս չխօսեցայ, հապա Հայրը որ Ձիս ղրկեց՝ ինք ինծի պատուիրեց ինչ որ պիտի ըսեմ եւ ինչ որ պիտի խօսիմ» Յովհ. ԺԲ. 44-50: (Կարդա նաեւ Յովհ. 2. 38, Եբր. Ժ. 7, Եսայ. ԽԲ. 19-21):

Ամփոփելով այս վկայութիւնները եւ անոնց նմանները, կ'եզրակացնենք թէ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի յարութենէ առաջ եղած փառքը Ասոր մէջ կը կայանայ, որ նա Իր աստուածային անձը ունայնաանալով մարմին առաւ եւ մարմնի մէջ աշխարհի բոլոր օրէնքներուն հնազանդեցաւ (առանց մեղքի), Հօրը Իրեն առջեւ դրած ամենածանր պայմանները ընդունեց ազատօրէն հնազանդելու անոնց մանրակրկիտ կերպով եւ այսպէսով մարդկային սերունդին փրկագործութիւնը ի գլուխ հանեց: Այս է աշխարհի կեանքին մէջ Իր ունեցած փառքը զոր առաքեալը տեսաւ եւ ամէն մէկ հաւատացեալ տեսնելու է:

ՀՈՒ. ԿԵՆՆՔ

ԶՕՐՈՒԹԵԱՄԲ ԼԵՑՈՒԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անկարելի է անշուշտ որ քրիստոնեայ անհատ մը կարգայ Պէնտէկոստէի պատմութիւնը՝ առանց «Վերէն զօրութիւն ստանալու բուն կարօտ մը զգալու: Արդեօք այդ զօրութիւնը մեզի համար ալ է:

Այս տողերը ընթերցողներէն շատեր թերեւս տխրութեամբ կը խոստովանին թէ՝ թէպէտեւ տարիներ զօրութեամբ լեցուելու կարօտը քաշած եւ լրջօրէն աղօթած ալ են սակայն երբեք լեցուած չեն: Արդեօք ինչո՞ւ: Յայտնի է թէ Աստուած կ'ուզէ որ Իր ամէն մէկ զաւակը զօրութեամբ լեցուած անհատ մը ըլլայ: Ո՞վ է ամենէն տկար, ամենէն խեղճ եւ ամենէն անարժան քրիստոնեան: Ե՛ս եմ: Դո՞ւն ես: Աստուած ճիշդ այդ կարգի մէկին կը հրամայէ, «Սուրբ Հոգիով լեցուէ»: Անոր հետեւող ամէն մէկ անհատ Ասոր ժառանգ եւ Քրիստոսի ժառանգակից է, ուրեմն եթէ ես եւ դուն զօրութեամբ լեցուած քրիստոնեաներ չենք, յանցանքը բոլորովին մերն է: Եթէ անտարբերութեամբ կը մերժենք Աստուծոյ այս սուրբ զօրութիւնը, Ասոր սիրտը կը վշտացնենք եւ Ասոր գործին արգելք կ'ըլլանք: Անհաւատին ամենէն մեծ մեղքը Ս. Հոգիին դէմ հայհոյելն է եւ հաւատացեալին ամենէն մեծ սխալը Սուրբ Հոգին զանց ընելն է:

Մարդիկ շատ անգամ կ'ըսեն թէ իրենք կը փափաքին Սուրբ Հոգիով լեցուիլ եւ կ'աղօթեն ալ որ Անով լեցուին, բայց չեն լեցուիր: Արդեօք ինչո՞ւ: Աստուած մեզմէ չպահանջեր յոգնատանջ ջանքեր լծափել, այլ կ'ուզէ որ Իրեն յանձնուինք:

Երեք տարեկան փոքրիկ աղջիկ մը այցելութեան զացած էր ազգականներու՝ որոնք երկու չարածճի տղաք ունէին: Տուն վերադառնալէ վերջ՝ Իր հօրը գիրկը նստած՝ շատ բաներ ունէր անոր պատմելիք: «Հայրիկ ձէքը եւ ձօրճը ամէն իրիկուն աղօթք կ'ընեն եւ Աստուծմէ կը խնդրեն որ զիրենք բարի տղաք ընէ» ըսաւ: «Ի՛նչ աղէկ բան», պատասխանեց հայրիկը: Փոքրիկը քանի մը վայրկեան մտածելէ վերջ ըսաւ, «Աստուած զանոնք տակաւին բարի ըրած չէ»:

Եթէ մենք ալ ամէն օր կ'աղօթենք, «Ով Հայր, զիս Բու Հոգիովդ լեցուր, զիս Բու Հոգիովդ մկրտէ», եւ եթէ տակաւին կատարուած չէ այս խնդիրքը, պատճառը այն երկու տղոց բարի չըլլալուն պատճառն է: Կարգ մը բաներ կան որ

զձեզ Աստուծոյ միացնող շղթայի մը մէկ օղակը կը ներկայացնէ: Իմ փափաքս է որ այս օղակը այնքան զօրանայ որ կարող ըլլաք ձեզ յաւիտեանապէս Տէրոջը միացնել:»

Քարոզիչը մեծ փափկութեամբ եւ հրապուրիչ կերպով խօսակցութիւնը լրացնելէն յետոյ՝ ներկայ գտնուող քսան հոգիներն ալ իրենց միտքը փոխեցին, այսինքն ապաշխարեցին: Հաւատքով Յիսուս Քրիստոսի փրկութեան նայեցան եւ այն նուրբ թելը սիրոյ հաստատուն կապի մը վերածուելով՝ զանոնք կապեց Աստուծոյ որ զիրենք սիրած եւ իր անձը իրենց համար մատնած էր:

Նոյնպէս ալ զօրութեամբ լեցուած քրիստոնեային մասին կարգալու փափաքդ կը ցուցնէ՝ թէ քու մէջդ ալ բարակ թել մը գոյութիւն ունի, որուն ներկայութիւնը կարող պիտի ըլլայ զքեզ զօրութեամբ լեցուած քրիստոնեայի մը վերածել:

Որեւէ մէկը, հոգ չէ որչափ ալ հեռու եղած ըլլայ, կրնայ Յիսուսի անուան հաւատալով զԱյն ընդունիլ ու Աստուծոյ որդի ըլլալ ճիշդ այս վայրկեանին: Վասնզի որոնք որ զինք ընդունեցին անոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու, որոնք կը հաւատան իր անուանը (Յովհ. Ա. 12): Նմանապէս որեւէ Աստուծոյ զաւակ որեւէ ժամանակ, իրաւունք ունի վերէն զօրութիւն ակնկալելու: Բայց արդեօք տասը օր սպասելու չե՞նք: Ոչ: Նոյնիսկ տասը ժամ: Կոռնելիոսի տան մէջ, երբ Պետրոս այն խօսքերը կը խօսէր, Սուրբ Հոգին իջաւ ամենուն վրայ, որոնք խօսքը կը լսէին (Դործ. Ժ. 24-44): Այն հեթանոսները որ Պետրոսի մօտիկ կ'ընէին, տակաւին իրենց հաւատքը դաւանած կամ իրենց ապաշխարութիւնը յայտարարած չէին եւ ոչ ալ նոյն իսկ մկրտուած էին, սակայն Տէրը անոնց սիրտերը զիտէր: Ուրեմն կարելի է Սուրբ Հոգիին պարգեւը անմիջապէս ընդունիլ եթէ Աստուծոյ պայմանները կատարենք: Տր. Նօրթհօթ Տէք օր մը ըսաւ, «Հարաւային կղզիներուն բնիկ քրիստոնեաներուն հոգեւոր կեանքին խորացման մասին մենք մասնաւոր ժողովներ սարքելու պէտք չունինք, քանզի անոնք իրենց դարձի եկած պահուն այնպէս կատարելապէս կը նուիրուին Աստուծոյ որ անմիջապէս կը լեցունին Սուրբ Հոգով ու զօրութիւնով»:

Թերեւս մէկը հարցնէ, «Միթէ Աստուծոյ պարգեւները իր բոլոր զաւակներուն համար ալ ձրի չե՞ն»: Այո, կատարելապէս ձրի են եւ միակ պայմանը հաւատալ է, սակայն ճշմարիտ հաւատքը չկրնար գոյութիւն ունենալ կեղծ սրտի

մը մէջ: Մեր համոզումն է թէ Սուրբ Հոգիով չի լեցուելուն միակ պատճառը մեր տգիտութիւնն է Աստուծոյ մեզի հանդէպ ունեցած պահանջներուն նկատմամբ:

(Շար.)

ՏԱԳՆԱՊԻ ՊԱՆԵՐ

«Յիսուս տեսաւ զանոնք որ կը տաքնապէին հովէն՝ թի քաշելու ատենին... Պետրոս նաւէն իջաւ, ջուրերուն վրայէն քալեց որ Յիսուսի քով երթայ, բայց հովը սաստիկ տեսնելով վախցաւ. ու երբ սկըսաւ ընկղմիլ, աղաղակեց, Տէր, աղատէ զիս: Եւ Յիսուս շուտ մը իր ձեռքը երկնցուց ու բռնեց զանիկա... Երբ որ ջուրերէն անցնիս, Ես քեզի հետ պիտի ըլլամ... Նեղութեան օրը Ինծի կանչէ, Ես պիտի աղատեմ...»:

(ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ)

Ծովն անյա կ'ալեկոծի՝

Ես միմակ եմ, միս միմակ:

Փորձուածիւնն կոնյակ-կոնյակ

ջարիքի պէս կ'արծարծի...

Երկիւղի այս դառն պահուն՝

Տէ՛ր, հզօր սիրովդ անիուն

Ձիս պահէ սրտիդ շատ մօտ,

Մինչեւ վայ մեծ Առաւօտ:

Ծովն անդուլ կը կատաղի՝

Փոթորկոտ խաւար գիշեր...

Դողափար սրտիս վրայ Տէր,

Կը յորդեն ջուրերն աղի:

Արցունքի այս ցուքս պահուն՝

Տէ՛ր, օրհնեալ շնորհքովդ անիուն

Պարարէ սիրտըս խռով

Մինչեւ որ ալ չըլլայ ծով:

Ծովուն պէս ամպ, փոթորիկ

Կ'որոտան գլխուս վերեւ:

Ս'ի... Ծածկէ սիրտս հիւ ի հիւ

Տէ՛ր, սիրոյդ մէջ անառիկ:

Սարսափի այս մութ պահուն՝

Տէ՛ր, անշէջ լուսովդ անիուն

Վեր տար զիս մինչեւ ամիսնք,

Ուր ա'լ պիտ' չըլլայ արցունք:

ՍԱՄՈՒԷԼ Պ.

(1օգան)

ՇՆՈՐՀԱՅ ԾՈՎԷՆ

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՍ

Եւ քու վրադ Տէրոջը հոգին պիտի գայ... եւ
դուն պիտի փոխուիս, ուրիշ մարդ մը պիտի ըլլաս:
Ա. Թագ. Ժ. 6

Ծնած եմ 1894ին Պրոսլայի կուսակալութեան Աֆիօն Գարահիսար գաւառին մէջ: Շատերու նման ես ալ միայն անունով քրիստոնեայ, բայց կեանքով հեթանոս մեծցած եմ: Տարիներ իմ կըրօնքս էր եկեղեցի յաճախել, երգեցողութիւնները գոց սորվիլ ու թութակի պէս կրկնել եւ ուրիշ ոչինչ: Դպրոցը ձգելէս յետոյ, 1911ի թուրք բանակին մէջ զինուորութեան կանչուեցայ եւ քաղաքէս բաժնուեցայ: Այլեւս եկեղեցի, կրօնք, օրէնք եւայլն վերջ գտան ինծի համար: Քրիստոնէական կեանք ապրիլ, մեղքէ զգուշանալ, նեղութիւններու մէջ աղօթքով Տէրոջը դիմել, բընաւ չէի գիտեր: Ինչ է վերստին ծնունդ եւ բոլոր էութեամբ Աստուծոյ կամքին ձգտիլ, անծանօթ էր ինծի:

Մինչեւ 1929 կեանքի բոլոր փուլերէն անցայ, վայրկեան մ'իսկ կեանքէն գոհ չէի, բայց բան մը կը փնտռէի առանց գիտնալու թէ ինչ է, միշտ կը մտածէի թէ ինչո՞ւ մարդիկ իրար չեն սիրեր, ինչո՞ւ աշխարհի գործերուն մէջ արդարութիւն չկայ, ինչո՞ւ ազգէ ազգ թշնամութիւն կայ: Որչափ որ ալ ասոնց պատասխանը ինձ մութ էր, սա համոզման կուգայի թէ Աստուած եւայլն չկայ: Խելք, դրամ ու գորութիւն ունեցող ազգը եւ անհատը քիչ մը կը վայելէ, իսկ չունեցողը դժբաղդ կուգայ եւ դժբաղդ կ'երթայ կ'ըսէի: Կը խորհէի թէ սէրէ, արդարութենէ ու խաղաղութենէ զրկուած այսպիսի աշխարհի մը մէջ միայն հարուստը շնչելու է, բայց աղքատը ու ինծի պէս մէկը վայրկեան մ'իսկ կենալու չէ: Եւ իբր հետեւանք այս բոլորին. անձնասպանութենէն աւելի յարմար ելք մը չէի տեսներ: Բայց մահէն ալ կը վախնայի, եւ սա երկու պատճառներով. նախ, կը մտածէի թէ վիճակըս ինչ պիտի ըլլայ եթէ ուրիշ կեանք մը կայ: Երկրորդ՝ ինծի հաճելի մոլութիւններ ու ցանկութիւններ ունէի որոնցմէ բաժնուիլ չէի ուզեր: Այսպէս, անորոշ, անպատակ կեանք մը ունէի: Ուրիշ միտքարութիւն չգտնելով սինեմա եւ թատրոն կը յաճախէի, երբեմն ալ ոգելից ըմպելիներու անձնատուր կ'ըլլայի: Բիշ անգամ Սբ. Դիրքը կը կարդայի, բայց ատով յուսահատու-

թիւնս կարծես կ'աւելնար. կ'ըսէի, այս բաները կեանքի մէջ չեն կրնար կիրարկուիլ, հին ատենները մարդիկ ո՞վ գիտէ ինչ բարեմասնութիւններ ունէին որ՝ Աստուած անոնց ուղադրութիւն կ'ընէր եւ անոնցմով կ'ըբաղէր, հիմակուան մարդոց սատանայական մտայնութիւնները հաշիւի առնելով կը խորհէի Աստուած այս տեսակ մարդոց հետ գործ ունենալ չուզեր:

Այս վիճակիս մէջ 1926ին Ֆրանսա եկայ: Հոս մարդոց անձնասիրութիւնը եւ ընդհանուր անբարոյականութիւնը տեսնելով, նորէն թուրքիա վերադառնալու փափաք ունեցայ՝ խորհելով թէ նորէն հոն՝ քիչ մը բարոյական ու խղճմտանք ըսուած բաներ կային: Այս մտքով ալ Հիօնէն Մարսէյլ իջայ՝ շոգենաւ առնելու համար: 5-6 օր Rue Mazenod Hôtel de la Marine բնակեցայ: Հոն տեղը լեցուն էր Ամերիկա երթալու դիտումով Պէյրութէն եկած ասորի ու հայ ընտանիքներով, որոնք աչքի դարմանումի կ'ըսպասէին: Անոնցմէ մէկուն, Աբրահամ Կէօվչէ-եանի հետ բարեկամացանք, զիս իրենց սենեակը ճաշի հրաւիրեց: Այս անձը, 60նոց տիկին մը եւ 12 տարեկանի մօտ մանչ մը միասին կը բնակէին. դժբողաբար տիկնոջ անունը չեմ յիշեր: Ճաշի ատեն տիկինը՝ սովորութեանը համեմատ՝ Աստուծոյ ու յաւիտենական կեանքի վրայով խօսքեր բացաւ, քանի որ ես ալ կացութիւնս իրենց պարզած էի արդէն: Անկարելի է որ մարդ մը Յիսուսին չյանձնուած խաղաղութիւն գտնէ, ըսաւ տիկինը. ըսաւ նաեւ այնպիսի խօսքեր, որոնք ինծի նորութիւն էին: Կ'զգայի թէ Սուրբ Գիրքը երբեք ինծի այնպէս պարզ ու հասկնալի եղած չէր. ամէն մէկ խօսքը կարծես իմ մէջ նոր լոյս, նոր յոյս կ'արթնցնէր: «Յիսուս ոչ թէ ատեն մը գործած ու հիմա դադրած է, այլ Անիկա նոյնն է առաջ ու հիմա եւ յաւիտեան» ըսաւ, միայն թէ իրեն մօտենալ, իրեն վստահիլ եւ իր կամքին համեմատ բաներ խնդրել զիտնալու ենք: Ես ներքին փոփոխութիւնս ծածկելով հպարտութեամբ այդ խօսքերէն չազդուածի երեւոյթ կ'առնէի. ես այր մարդ մը, կնիկէ մը խելք սորվելու չէի կրնար խոնարհիլ կարծես, բայց երբ ճաշէն յետոյ՝ վար կ'իջնէյի, կ'զգայի թէ մարմինիս հետ հոգիս ալ կշռացած էր: Վրաս թեթեւութիւն մը, մէջս զոհունակութիւն մը կար, տխրութիւն ու վիշտ անհետացած էին, ապագայի վրայ մտածել, աշխարհէն բարիք սպասել եւ ուրիշ խորհուրդներ դադրած էին, միայն կար նոր փափաք մը՝ ասկէ յետոյ Ս. Գիրքի ընթերցանութեան նուիրուիլ, Աստուծոյ կամքը սորվիլ եւ

ըստ այնմ ապրիլ: Կարծես առաջուան ողորմելին, խեղճը ես չէի: Այս փոփոխութիւնս ոչ թէ միայն ես, հապա ծանօթներս ալ կ'զգային, վասնզի կեանքէս տրտնջալ, վիճակէս դժգոհիլ վերջ գտած էր: Երբ հոգևոր եղբայրներու հետ հաւատաքի, յոյսի եւ սիրոյ ճամբուն մէջ քալելու ալ ըսկսայ, նոր կեանքին ճոխութիւնն ու քաղցութիւնը աւելի զգալի դարձաւ:

Այսպէս՝ 1929 Յուլիս ամսոյն եղբայրներու եքորբերու ներկայութեան, սիրտս ու հոգիս կատարելապէս Տէրոյ նուիրեցի, Յիսուսը անձնական Փրկիչս, իմ Տէրս եւ իմ Աստուածս ընդունիլս յայտնեցի. ապաշխարեցի՝, փա՛ռք Իւր անհուն սիրոյն ու ողորմութեանը: Ան որ իմ առաջուան խաւարս լոյսի փոխեց, ինծի Իր ձրի շէնորհքով փրկութիւն պարգեւեց եւ զիս Իր սուրբերուն ժառանգակից ըլլալու կանչեց, ինծի պէս տկարը զօրացուց, աղքատը հարստացուց, սիրտս ու հոգիս ուրախութեամբ ու խաղաղութեամբ լեցուց, Իր հոգին զիս փոխեց, ուրիշ մարդ մը ըրաւ:

Հիմա զիշեր ցորեկ Իր կամքը կատարելու վրայ կը խորհիմ, միշտ Իրեն հաճելի եղածը ընելու կը ջանամ, եւ անարժան ըլլալով մէկտեղ, Իր զօրութեամբը գիշը, իսաչեալ Փրկիչը քարոզել կը ջանամ:

Զմոռնամ ըսելու որ հիմա ոչ մեռնելու փափաք ունիմ, ոչ ալ մահէն կը վախնամ, որովհետեւ կատարեալ վստահութիւն ունիմ թէ Տէրը պիտի զայ կամ զիս պիտի կանչէ այն ատեն երբ զիս բոլորովին Իրեն նմանցուցած է եւ երբ իմ միջոցաւ ուրիշներուն վրայ ընելիքը լինցուցած: Իմ միակ ջանքս է պատրաստ գտնուիլ, այս մասին ալ Իրեն կը յուսամ:

Սիրելի ընթերցող, եթէ այս լոյսը եւ յոյսը ունիս, ի սրտէ կը շնորհաւորեմ, եւ մենք, մարմինով անծանօթներ ըլլալով հանդերձ, հոգիով մէկ թափաւորի զինուորներն ենք, աղօթքով պատերազմակից: Իսկ եթէ տակաւին անլոյս, անյոյս եւ խաւարի մէջ ես ու սատանայի ձեռքերուն մէջ խաղալիք, կ'աղաչեմ քու անմահ հոգիիդ մասին անհոգ մի ըլլար. շուտ Փրկիչին դիմէ, հաւատա եւ պիտի փրկուիս մեղքերդ խոստովանէ եւ ներում պիտի գտնես, խաղաղութիւն պիտի ունենաս, պիտի Աստուծոյ որդի ըսուիս: Ելի՛ր, լուսաւորուէ՛, օրհնուէ, ու քու կարգիդ դուն ալ ուրիշներուն լոյս եւ օրհնութիւն եղիր, որպէսզի Իրմէն ողորմութիւն գտնողներս շատնանք եւ բոլորս միասին մինչեւ մեր վերջին շունչը Իր փառքին համար աշխատինք, ու մեր

խօսքերով, գործքերով ու կեանքով յայտնենք Աստուծոյ ու մարդոց թէ մեզի համար ապրիլը Բրիստոս է, ու մեռնիլը՝ օգուտ:

ԱՖիօն Գարահիսարցի
ԱՐՄԵՆԱԿ ՕՍԿԱՆԵԱՆ

Հիօն

ԱՅՍՕՐՈՒԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

(Նաթ. 7 Թիւ. 15)

ԲԵՐԱՆԸ ԳՈՅՈՒԱՄ ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆ. —

Եթէ անոնք Իմ խորհուրդիս մէջ կեցած ըլլային, այն ատեն իմ խօսքս՝ իմ ժողովուրդիս լսել պիտի տային, եւ գտնոնք իրենց չար ճամբաներէն ու իրենց չար գործքերէն պիտի դարձնէին:

Երեմ. ԻԳ. 22

Հովիւներ կը վախճան խօսելու. —

«Ի՞նչ է եղեր այսօրուան եկեղեցիին» հարցին քննութիւնը ստիպողաբար մեր ուշադրութիւնը կը դարձնէ՝ հովիւներու հակամիտութեանը՝ աչք գոցելու իրենց հօտերու մեղքերուն: Ուստի այս գլուխը կ'անուանենք «Բերանը գոցուած քարոզութիւն, քանզի յիշաւի այսօրուան պաշտօնեաներու մեծամասնութիւնը իրենց բերանը գոցած են՝ օրուան որոշ չարիքին դէմ: Թէեւ այս բանին ճշմարտութիւնը ընդունող քարոզիչներ շատ քիչ են եւ թէեւ ոմանք զօրաւոր կերպով կը պնդեն, թէ չեն վախնար իրենց ուղածը քարոզելէ, սակայն ուշադրաւ է որ չեն ուզեր այսինչ մասնաւոր բաներուն վրայ քարոզել: Այսպիսիները կը նմանին այն երիտասարդին, որ արտայայտուեցաւ թէ ծխելու սովորութիւնը կրնայ ձգել ո՛ր ատեն որ ուզէ, բայց չուզեր:

Այսօր գրեթէ բոլոր քարոզիչներ կը դատաւարապարտեն կարգ մը մեղքեր: Բայց առհասարակ այնպիսի մեղքեր որոնք իրենց ժողովուրդին մէջ չեն գտնուիր: Մտիկ ըրի երիտասարդ քարոզիչ մը որ պարելը եւ գինի փախցնելը բոլոր ուժով կը դատաւարտէր, բայց իր ժողովուրդին մէջ ոչ պարող կար ոչ ալ խմելիք փախցնող: Սակայն բան մը չէր քարոզեր իր ունկնդիրներէն այն աղջիկներուն, որոնք գրեթէ կիսամերկ էին, թէեւ ինչպէս ինքը ինծի ըսաւ, անոնց այս ընթացքը մեղադրելի կը գտնէր:

Առաջին գլուխներէն մէկուն մէջ ըսի, եթէ մեր երկրին քարոզիչները պէտք եղած դիրքը զբաւէին այս հագուստի աղէտին դէմ՝ ան չպի-

տի կրնար ընդհանրանալ մեր քրիստոնեայ կիներուն մէջ: Վստահ եմ այս մասին: Բայց պաշտօնէութիւնը այս մասին գրեթէ անդադար լռութիւն պահեց:

Մի քանի ամիս առաջ դարձաւ իստու-թիւն մը տուաւ համայնքի մը մէջ, եւ վերջաւորութեան ունկնդիրները որոշ քայլ մ'առին նորաձեւութեան եւ մագ կտրելու դէմ: Որոշմնագիրներ ստորագրեցին: Այս որոշմնագիրներէն օրինակ մը հրատարակուելու համար ղրկուեցաւ տեղական թերթի մը, որուն խմբագիրը մեծ եկեղեցիի մը հովիւն էր, բայց որոշմնագիրը չհրատարակուեցաւ: Գրողը երկու անգամ նամակով հարցուց սոյն հովիւին թէ ի՞նչ պատճառաւ չի հրատարակուեցաւ այն որոշմնագիրը, բայց անիկա պատասխան չտուաւ: Այս որոշմնագիրը ղրկուելէն ճիշդ շաբաթ մը առաջ նոյն խմբագիրը կը ձաղկէր ուրիշ քաղաքի մը լողացող աղջիկներուն տողանցքը եւ կ'ըսէր թէ՝ շատ պէտք կար թզենիի տերեւներուն: Բայց Աստուած գիտէ, եւ այդ հովիւն ալ թէ թզենիի տերեւներուն պէտք կայ իր իսկ եկեղեցիին մէջ սակայն ինք այդ մասին կը լռէր:

Ոչ միայն հազուադէպ, հապա ուրիշ բաներու մէջ ալ տկարութիւն կը ցուցնեն հովիւներ: Օրինակ շարժապատկերներու մասին ալ թուլատու են երբ տեսնեն թէ ժողովուրդը կը յաճախէ հոն: Ոմանք ալ պարելու վրայէն լուռ կ'անցնին, երբ կը գտնեն թէ իրենց եկեղեցիին գլխաւորները համակիր են պարելու: Ուրիշներ սխալ բան մը չեն գտներ, երբ կին ու այր մարդիկ միասին կը լողան: Շատ քիչեր ծխելու հակառակ կը խօսին, որովհետեւ իրենց ժողովուրդին մէջ ծխողներ կը գտնուին: Կարծես առ հասարակ կը հետեւին ընթացքին այն բրօֆէսորին որ դասախօսութեան մը պահուն իրեն ուղղուած հարցման մը պատասխանելով՝ ըսաւ, «Աղէկ, եթէ աշակերտներուն ամէնն ալ չծխող ըլլային՝ այսպիսի օրէնք մը ծխելու դէմ դնել՝ յարմար պիտի ըլլար, բայց եթէ ոմանք արդէն կը ծխեն, չեմ խորհիր թէ իմաստութիւն պիտի ըլլար այդպիսի օրէնք մը դնել»:

Հոգեւոր պաշտօնեաներ ինչո՞ւ, ո՞ր մարդէն եւ ի՞նչ բանէ կը վախնան: Ինչո՞ւ կը մոռնան Յիսուսի խօսքը, «Մի՛ վախնաք անոնցմէ որ մարմինը կը սպաննեն, ու չեն կրնար հոգին սպաննել, հապա աւելի անկէ վախցէք դուք որ կրնայ հոգին ու մարմինը գեհենին մէջ կորսնցնել»: Ինչո՞ւ իրենց բերանները կը գոցեն եւ չեն յիշեր Աստուծոյ կողմէն Նսայիին տրուած հրամանը,

«Բարձրաձայն կանչէ եւ մի խնայեր, ձայնդ փողի պէս բարձրացուր, եւ իմ ժողովուրդիս իրենց յանցանքը ու Յակոբի տանը իրենց մեղքերը պատմէ»:

Միջանկեալ ըսեմ թէ, ասով չեմ ուզեր հովիւները վարկաբեկել: Զանոնք մեծապէս կը յարգեմ: Կը հաւատամ թէ անոնք աշխարհիս աստուածապաշտ դասակարգն են: Աստուծոյ բոլոր պաշտօնեաները կը սիրեմ, միայն թէ «Ի՞նչ է եղեր այսօրուան եկեղեցին» հարցը կը տարրալուծեմ: Եւ գիտենք որ պաշտօնեաներու վրայ տեսնուած վախը այս հարցին պատասխաններէն մին է: Զեմ ըսեր թէ մեր պաշտօնեաները գէշ մարդիկ են: Անոնք բարի են, բայց այդ բաւական չէ: Աբրահամ ալ բարի մարդ էր, սակայն վախէն պարտուեցաւ եւ ստեց: Պետրոս բարի մէկն էր, բայց ամբողջն վախցաւ եւ ուրացաւ: Մեր հոգեւոր պաշտօնեաները բարի մարդիկ են, բայց վախկոտ են, եւ իրենց վախկոտութիւնով անպատմելի փնաս կը հասցնեն Քրիստոսի և արդարութեան գործին:

Անոնք կը վախնան, քանզի անոնցմէ շատեր իրենց պաշտօնին վրայ այնպէս կը նային ինչպէս բժիշկ մը կամ փաստաբան մը իր արուեստին վրայ, իբր միջոց ապրուստի: Երիտասարդ քարոզիչներ դպրոց կը յաճախեն եւ սա պատճառաբանութեամբ, «Եթէ գալէճ երթամ՝ հովուութեան գիրքը կրնամ գրաւել որ սալով կը բերէ: Եթէ համալսարանական ուսումն լրացնեմ, եւ վարդապետ տնտրուող ունենամ՝ այն ատեն երկրին ամենալաւ հովուութիւնը կրնամ ստանձնել»: Եւ «Ամենալաւ հովուութիւնը» ըսելով՝ ամենաբարձր եկամուտ բերող հովուութիւնը ըսել կ'ուզեն:

Արդ, վճարուող հովուութիւններ ի՞նչ բանի կ'առաջնորդեն: Ահա երիտասարդ ուսանող մը որ դպրոցներու մէջ պայքարելով գիտութիւնը ըստացած է, և ասով տարեկան 4000 տալէր եկամուտ ապահովող հովուութիւն մը ձեռք ձգած: Եթէ ան կարենայ իր ժողովուրդը հաճեցնել այդ հովուութիւնը կրնայ պահել, ուստի ժողովուրդը հաճեցնելու կը նայի, ինչպէս որ լաւ վարձք ստացող գործատուր մը կը փափաքի իր գործատէրը հաճեցնել: Ան յաճախ կը մոռնայ թէ զինք կանչողը Աստուած է, եւ իր պարտականութիւնն է զԱյն հաճեցնել: Այո, ամսականի սիրոյն համար պաշտօնավարող հովիւը ինքզինք կը շղթայակապէ, իր բերնին վրայ ծածկոց կը դնէ, այնպէս որ ազատ չէ այլեւս Աստուծոյ իբր բերան ծառայելու: Գիտեմ թէ ասիկա արմատա-

կան արտայայտութիւն մըն է: Գիտեմ թէ ասիկա պիտի մերժուի շատ հովիւներէ, բայց կ'ազնեմ որ զայս կարգացող ամէն մէկ հովիւ ուշադրութեամբ նկատի առնէ խնդիրը: Թող անիկա իր հովուութիւնը բաղդատէ Քրիստոսի առաջին հովիւներուն հետ: Ինչո՞ւ Պօղոս առաքեալ իբր օրինակ չընդունուի աշխօրուան հովիւներէն: Աստուծոյ օգտակարապէս գործածուած մեծ մարդ մը չէ՞ր ան: Կարդա անոր կենսագրութիւնը եւ տես թէ որչափ աշխատեցաւ: Ուրիշներուն բեռ չըլլալու համար իր իսկ ձեռքերովը գործեց: Նա շատ քիչ բանով կը բաւականանար: Նա կ'ըսէ, «Ինչու որ ես սորվեցայ դո՛ւ ըլլալ իմ գտնուած վիճակիս մէջ»: Ասանկ ըսելով նա ազատ կ'զգար քարոզելու ինչ որ Հոգին կը թելադրէր: Ամսականի վախը չունէր, գեղեցիկ հագուստներու, ինքնաշարժերու, ընկերային դիրքերու պէս ունայն բաներու վրայ աչք չէր տնկեր: Ընդհակառակը նա այդպիսի բաներու դէմ քարոզեց: Կրնա՞ս ըսել թէ, «Պօղոս բացառութիւն կազմող անձնաւորութիւն մըն էր»: Բայց Աստուծոյ օժեալներէն շատ ուրիշներ ալ նման ընթացք ունեցան, և անոնց անունները միշտ կը փայլին, քանզի արհամարհեցին այս աշխարհի զաղիր բաները ու բոլորովին Աստուծոյ համար ապրեցան: Անգամ մը հովիւին մէկը կ'ըսէր, թէ յօժար էր իր ժողովուրդին ճշմարտութիւնը քարոզելու այս բաներուն մասին, եթէ մինչեւ իսկ իրեն վրան մըն ալ մնար ազատ քարոզելուն՝ Տէրո՞ջ վստահելով: Ես իրեն ըսի թէ պէտք էր այդպէս ընել, բայց անիկա դեռ այդ քաջութիւնը չունեցաւ:

Հակադրութիւն մը. — Առջի գլուխներէն մէկուն մէջ Ոսկերեքանի անուշիւ յիշեցի: Ներկայ ժամանակիս բոլոր քարոզիչները պէտք է կարգան այդ մեծ մարդուն կենսագրութիւնը: Վախցող չէր ան, որովհետեւ կորսնցնելու բան չունէր: Թէեւ դարձի եկած ատեն ունէր հարստութիւն, բայց բոլորն ալ ցրուեց: Պատմութիւնը անոր մասին կ'արձանագրէ թէ հազիւ 4. Պօլսոյ Պատրիարքութեան կանչուած էր, հազիւ թէ օժուած Աղէքսանդրացի թէոփիլոսի ձեռամբ. արտասանեց իր բարկացայտ յանդիմանութիւնները զինք բարձրացնողներու տկարութիւններուն դէմ: Ոչ մէկէն կը վախնար, ոչ մէկու կը խնայէր: Այսպէս՝ ոչ մէկը կրնայ կողոպտել զայն որ Քրիստոսի սիրոյն համար բաժնուած է իշխանական հարստութենէ, ոչ մէկը կրնայ կաշառել այն մարդը որ մէկէ մը խնդրելու բան մը չունի, եւ կրնայ ապրիլ ցամաք հացով: Ոչ մէկը կրնայ լուռ

կեցնել այն անձը որ ինքզինք կը նկատէ Ամենակարող Աստուծոյն մէկ պաշտօնեան, եւ որ անոր սեղանին առջեւ փոշիի կը վերածէ այս աշխարհիս փառքը:

Ոսկերեքանին պատմութիւնը կարդալով նաեւ կը տեսնենք թէ անիկա մինակ կը ճաշէր եւ միշտ ալ տունը: Մեծաւորներ կը դժկամակէին ըսելով թէ ան չյարգեր իրենց կոչունքները իր ներկայութեամբ: Բայց անիկա նկատողութեան չէր առներ անոնց գանգատը. բարձր կը զասէր նա իր թանկագին ժամանակը և չէր ուզեր զայն ինչպէս նաեւ իր մարմինը ու հոգին՝ պալատականներու հաճոյքին զոհել:

Աշխօրուան հովիւները Ոսկերեքանէն որքան տարբեր են այս բաներուն մէջ: Որքա՞ն տարբեր են իրենց հարստութիւնները տալու մէջ: Որքան տարբեր են հարուստներու խնճոյքը մերժելու մէջ: Որքա՞ն տարբեր են ծածկեալ կեանք մը անցնելու և պարզ կերակուրը նախընտրելու մէջ:

Պատմութեան մէջ Ոսկերեքանին մասին աւելին կարդալով կը տեսնենք թէ անոր առանձնացած կեանքը «Միայն բողոք մըն էր այն ատենուան գրեթէ ընդհանրացած նիւթապաշտութեան դէմ—այն սոսկալի բարոյական անկումին դէմ, որ կը կործանէր ընկերութիւնը: Քանի որ զեխութիւնն ու պերճանքը եւ զգայուն հաճոյքը զլխաւոր չարիքներն էին Հոգիմէական աշխարհին, բնական էր որ այս չարիքներուն դէմ բողոք յարուցանելը մեծ թշնամութիւն առաջ պիտի բերէր: Զեխութիւն եւ աշխարհային հաճոյս սիրութիւն Աստուծոյ կամքին հակասական կը նկատէր այդ արդարութեան քարոզիչը, եւ Տէրո՞ջ մարգարէներուն նման սաստիկ կը յանդիմանէր անոնց ենթակաները: «Հապա ի՞նչ տեսնելու ելաք» հարցուց մեր Տէրը արհամարհու հեգնութեամբ մը, «Փափուկ հանդերձներ հագած մարդ մը, ահա փափուկ հանդերձներ հագնողները թագաւորաց տուներն են», որ ըսել էր՝ «Իմ մարգարէներս, իմ պաշտօնեաներս չեն հրճուիր ասանկ բաներով»: Այդպիսի հոգիի տէր մէկն էր նաեւ Ոսկերեքան:

Հիմա մենք նոյն պէտքը չունի՞նք միթէ բողոքելու աշխօրուան ընդհանրացած նիւթապաշտութեան դէմ: Պէտք չունի՞նք անանկ պաշտօնէութեան որ բողոքեն աշխարհային հաճոյս սիրութեան, զեխութեան եւ շոայլութեան դէմ: Պէտք չունի՞նք միթէ Եղիայի հոգիով զգեստաւորուած պաշտօնեաններուն: Այսօր շատ պաշտօնեաններ կը հագուին փափուկ հագուստներ:

Ի՞նչ կարողութեան տէր էին հին քարոզիչ-

ները: Որքա՛ն անվեհեր էին: Անոնք թագաւորներու եւ առաջնորդներու առջեւ կենալով անոնց մեղքերը կը դատաւարտէին եւ ապաշխարութեան կը հրաւիրէին զանոնք: Անոնք բա՛ն մը չունէին կորսնցնելու, հապա միայն իրենց կեանքը, եւ զայն ալ «Պատուական» չէին սեպեր: Անոնց զանձերը երկինքն էր եւ սրտերնին ալ:

Ո՛վ արդի պաշտօնեաներ, զգաստացէ՛ք: Մըտիկ ըրէ՛ք Աստուծոյ ձայնին, «Բարձրաձայն կանչէ եւ մի խնայեր, ձայնդ փողի պէս բարձրացուր, ու իմ ժողովուրդիս իրենց յանցանքը... պատմէ՛»:

«Եւ պիտի խօսիմ անոնց իմ դատաստաններս, անոնց բոլոր չարութիւններուն համար... ուրեմն դուն քու մէջքդ պնդէ, ու ելիր, եւ քեզի բոլոր հրամայածս անոնց ըսէ... անոնք քեզի հետ պիտի պատերազմին, բայց պիտի չկրնան քեզ յաղթել, վասնզի Ես քեզի հետ եմ, քեզ ազատելու համար, կ'ըսէ Տէրը»:

Անոնցմէ մի վախնար եւ անոնց խօսքերէն մի զարհուրիր»

(Շար)

Ազատ թարգ. Վեր.ՆԻԳՕԼԱ ՓԱՓԱԶԵԱՆ

.....
Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԸ

ԳԻՐՔ ԾՆՆԴՈՑ

«Ծնունդք...»: Յիրաւի կարելի չէ այլապէս կոչել Հնգամատեանի առաջին գիրքը: Հոն զըծուած է երկրի եւ մարդկութեան սկզբնաւորութեան գրաւիչ մէկ պատկերը: Մեզ կը յայտնէ մեղքին, տառապանքին եւ մահուան ծագումը. ցոյց կուտայ անդրանիկ ոճիւրը, ապա՝ առաջին պաշտամունքը, կը խօսի ցեղերու եւ լեզուներու բազմազանութեան վրայ եւ ի վերջոյ ու մանաւանդ ընտրեալ ցեղին ծագման պատմութիւնը կ'ընէ մեզի:

* * *

Ընդհանուր առումով՝ Ծննդոցի, Հնգամատեանի եւ նոյնիսկ բոլոր Ս. Գրքին նպատակը մէկ է. Աստուծոյ իշխանութեան երկրի վրայ վերջնականապէս հաստատուելուն պատմականը ընել: Ստեղծագործութեան պատմութիւնը երեան կը բերէ գործունէութեան դաշտը: Մարդով երեւան կուգայ Աստուծոյ ծրագրին գործադիրը: Դրախտին մէջ Աստուածային ծրագիրը կ'սկսի,

մարդուն անկումը կը խանգարէ զայս եւ հակառակ իշխանութիւն մըն է որ երեւան կ'ելլէ. ջրհեղեղը Աստուծոյ միջոցն է ջնջելու Իր ծրագրին անյարմար դարձած մարդկութիւնը եւ կերպով մըն ալ նորոգելու զայն: Բարեկոնի աշտարակին փորձը նոր ջանք մըն է Աստուծոյ հեռանալու: Այն ատեն Աստուած նոր միջոց մը ձեռք կ'առնէ, մարդկային կոչումին մէջ կը մարմնաւորի մարդկութեան յոյսը: Եթէ Նոյ Աստուծոյ կ'ընտրուի ֆիզիքապէս փրկելու մեր ցեղը, Աբրահամ կ'ընտրուի հոգեւոր գործակցութեան մը համար՝ իր մէջ պահելով ճշմարիտ եւ սուրբ Աստուծոյ զիտութիւնը եւ վատահելով ու հնազանդելով Անոր: Ծննդոց գիրքը այսպիսով ցոյց կուտայ փրկագործութեան ծրագիրը որ հետզհետէ պիտի ընդլայնուէր ընդգրկելու երկրի բոլոր ազգերը: Այս ծրագրին է որ կապուած են Իսահակ եւ Յակոբ:

Ուրեմն զազափարի եւ նպատակի անհերքելի միութիւն մը կայ Ծննդոց գիրքին մէջ: Այս միութիւնը մեզ թոյլ կուտայ հաստատելու թէ Ծննդոց գիրքը մէկ ներշնչման եւ մէկ հեղինակի արտայայտութիւնն է: Սկսեալ հրէական աւանդութենէն ամէն դարու գիտնականներէն շատեր Մովսէսի կը վերագրեն Հնգամատեանի խմբագրութիւնը, բայց մանաւանդ մեր Տէր Յիսուս Բերիստոս ու առաքեալները ու անոնցմէ վերջը եկեղեցւոյ հայրերը: Միայն մարգարէ մը կրնար նահապետներուն պատմութիւնը գրել. հոգեւոր խոր փորձառութեան, բազմակողմանի հմտութեան, զարգացումի, պատուական նկարագրի եւ անսկուն հաւատքի տէր անձ մը, Մովսէս մը պէտք էր Աստուծոյ փառքին համար կանգնելու «Ծննդոց»ի պէս հոյակապ կոթողը:

Բաւական դժուար է մեզի Մովսէսի խմբագրութեան մանրամասնութեանց մէջ թափանցել: Հաւանաբար իր գործին իբր հիմ ծառայող զըրուութիւններ հասան իրեն: Հնախուզական վերջին գիտերը ցոյց կուտան թէ Աբրահամի շրջանէն առաջ ցեղապետներ սովորութիւն ունէին մեծ խնամով պահելու կաւէ տախտակներու վրայ փորուած սեպաձեւ գրութիւններ, որոնք տեղեկութիւններ էին իրենց նախնիքներուն վրայով: Կը խորհուի թէ, Աստուծոյ զրախտի մէջ Ազամի եղած յայտնութիւնները՝ Ենովքի, Նոյի, Սեմի ու Աբրահամի միջոցաւ հասած են մինչեւ Մովսէս, Յետոյ Աստուած Սինա լեռան վրայ Մովսէսի տըւած մեծամեծ յայտնութիւններու ընթացքին, լրացուցած է ստեղծագործութեան այդ պատմութիւնը: Թերեւս ասոր համար Աստուած մարգա-

րէական տեսիլքներ շնորհեց, որոնք ինչպէս ապագայի, նոյնպէս նաեւ անցեալի իրողութիւնները կրնան պատկերացնել: Այս պարագային Մովսէս էր որ առաջին անգամ գրի առաւ զանոնք:

Թէ Հնգամատեանին հեղինակը Մովսէս է, յայտնի է նաեւ հետեւեալ համարներէն.— Ելից Ժէ. 14, ԻԴ. 4, ԼԴ. 27, Թուոց ԼԳ. 2, Բ. Օրրնաց ԼԱ. 9-11, 22, 26: Իսկ միայն Ծննդոց գիրքը 60 անգամէ աւելի մէջ կը բերուի նոր Կտակարանի 17 գիրքերուն մէջ:

ԺԸ. դարու կիսուն, սկսան հրատարակուիլ քննադատական գաղափարներ, որոնք Ծննդոցը եւ ի վերջոյ նաեւ Հնգամատեանին միւս գիրքերը կը ներկայացնեն իբր աւելի կամ նուազ չափով իրարու հակասական գրութիւններու հաւաքածոյ մը: Ենթադրութիւն ենթադրութեան յաջորդեց: Կարծես շահադիտութեան անսահման դաշտ մը բացուած ըլլար անոնց առջեւ: Ամէն նոր քննադատ վարկած մը յառաջ կը քշէր լըրացնելով կամ փոխելով արդէն տարածուած գաղափարները: Ինչ որ ալ ըլլան բարձրագոյն քննադատութեան պահանջները, յայտնի կ'երեւի թէ ձեռք բերուած եզրակացութիւնները հետու են վերջնական եւ գոհացուցիչ ըլլալէ: Ծայրայեղ քննադատները շատ յաճախ սխալեցան իրենց քննական մէթոտներուն եւ հայեցողութեանց մէջ: Կարելի չէ մտնել մանրամասնութեանց մէջ, բայց շատ յաճախ անտեղի, այլանդակ, նոյնիսկ ծիծաղելի տեսութիւններ լոյս տեսած են քննադատներու գրչէն իբր... գիտական'' տեսութիւն Հնգամատեանին կազմութեան մասին: Միանգամ ընդ միշտ յայտարարենք թէ իբր անկողմնակալ, ամէն վստահութեան արժանի եւ լուրջ գործ չենք կրնար սեպել ոեւէ տեսութիւն, որ կը յաւակնի մեզի ներկայացնել Հնգամատեանը իբր հէքեաթներու հաւաքածոյ մը կամ իբր գիրք մը, ուր ճշմարտութիւնն ու սուտը իրարու խառնուած են, եւ որ անոր պարունակած պատմութեան վաւերականութիւնը ու խմբագիրներուն ուղղամտութիւնը եւ պատիւը խնդրոյ առարկայ կը դարձնէ: «Ոչինչ», կը գրէ Prof. Von Orelle «Այնքան կը զարմացնէ զիս որքան այն յօժարութիւնը, որով նոյնիսկ բանիբուն խուզարկուներ կը փարին տիրող վարկածին եւ կը կրկնեն ամենէն յանդուգն ենթադրութիւնները, իբր թէ անոնք անվիճելի հատամածի մը մաս կազմած ըլլային»:

Ծննդոց գրքին ներշնչումը եւ Աստուածային յայտնութեան արդիւնք ըլլալը վաւերացուած են

պատմութեան եւ Տէր Յիսուսի վկայութիւնովը (Մատթ. ԺԹ. 4-6, ԻԴ. 37-39, Մարկ. Ժ. 4-9, Լուկ. ԺԱ. 49-51, Ժէ. 26-29, 32, Յովհ. Ա. 5, Է. 21-23, Ը. 44 եւ 56): Հոն պատմուած զէպքերը աւելի քան 2300 տարուայ շրջան մը կը զրաւէին: «Ութը մեծ ուխտերէն չորսը.— Եղեմականը, Ադամի, Նոյի եւ Աբրահամի տրուած ուխտերը այս գիրքին մէջ են յիշուած եւ ասոնք են այն հիմնական ուխտերը որոնց կապուած են նաեւ յետագայ չորս ուխտերը.— Մովսիսականը, Պաղեստինեանը, Դաւիթինը եւ Նորը, որոնք զխաւորաբար կցուած են մանրամասնութեան կամ զարգացման համար: Հետեւաբար բոլոր յետագայ յայտնութեանց արմատները խորունկ կերպով իջած ու հաստատուած են Ծննդոց գրքին մէջ եւ ո՛վ որ կ'ուզէ յայտնութիւնը հասկնալ հոս պէտք սկսի» է:

Ուրեմն Ս. Գրոց հոյակապ Գանձարանին ոսկեղէն բանալին է Ծննդոց գիրքը:

(Մնացեալը յաջորդով)

Փարիզ

Զ. Բ. ՊՈԽՏԱՔԵԱՆ

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱՆ

Մեր Տէրոյ Յիսուս Բրիստոսի գործունէութեան ամենէն կարեւոր վայրերէն մին էր՝ Գալիլայի ծովակին հիւս. արեւմտեան կողմը տարածուող փոքր երկրամասը: Ան՝ թէեւ այժմ մեծ մասամբ աւերակոյտներով եւ փուշերով ու տատակներով ծածկուած է, ու ամայի՝ բայց այն օրերուն Գալիլայի ամենապտղաբեր ու բազմամարդ գաւառներէն մին էր: Ամէն տեղէ աւելի՝ հոս ցանուած սերմն էր որ մէկին տեղը մինչեւ հարիւր կ'արտադրէր: Առեւտրական տեսակէտով ալ նշանաւոր էր ան. անկէ կ'անցնէր այն մեծ պողոտան որ Դամասկոսէն Աքքա եւ Տիրոս կ'երկարէր եւ որու վրայէն կ'երթեւեկէին կարաւանները ուղտերու՝ վաճառականական ապրանքներով ծանրաբեռնուած: Այդ գաւառը ունէր խիտ, եւ մեծ մասամբ բարեկեցիկ բնակչութիւն մը, որ կը զբաղէր երկրագործութեամբ, ձկնորսութեամբ եւ առուտուրով: Անոր ամենէն կարեւոր քաղաքն էր Կափառնայում, ուր կը գտնուէր Հռոմէական պահակազօրք (Մատ. Ը. 5-10) ու մաքսատեղի մը (Մատթ. Թ. 9) եւ ուր բնակեցաւ բաւական երկար ատեն մեր Տէրն ալ (Մթ. Դ. 13 եւ Թ. 4) եւ զայն իր հրաշքներովը մինչեւ երկինք բարձրացուց (Մատթ. ԺԱ. 23): Երկրորդ

կարեւոր քաղաքն էր Բեթսայիդա, ուր նըմանապէս գործուեցան շատ հրաշքներ (Մատ. ԺԱ. 21) եւ ուրկէ ծագած են Յիսուսի աշակերտներէն երեքը (Յովհ. Ա. 40-44):

Ահա հոս, Բեթսայիդայի մէջ ծնած է Պետրոս: Ծննդեան թուականը յայտնի չէ, բայց հաւանաբար Քրիստոսէն մի քանի տարի առաջ տեսած է արեւին լոյսը: Իր ծննդեան անունը Սիմոն էր եւ հայրը կը կոչուէր Յովնան (Յովհ. Ա. 42, ԻԱ. 45, Մատթ. ԺԶ. 17), իսկ եղբայրը՝ Անդրէաս, որ աւելի կանուխ Յիսուսի աշակերտ եղած է քան Պետրոս եւ որու միջոցաւ գտած է վերջինս իր Տէրը (Յովհ. Ա. 40-42):

Պետրոսի մանկութեան և երիտասարդութեան շրջանին վրայ բնաւ բան չենք գիտեր: Այսու ամենայնիւ այսքանը որոշ է թէ՛ բոլոր հրեայ մանչերու նման՝ ան ալ դպրոց այցելած է: Թէև Երուսաղէմի հրեաները կ'արհամարհէին Գալիլիացիները իբր տգէտ և Աստուծոյ խօսքին ընդդիմացող, բայց աւետարաններէն եւ հրէական զբաղանդութենէն կը հասկնանք թէ Յիսուսի ատեն Գալիլիայի ամէն մէկ գիւղը իր ժողովարանը (սինակոկը) ունէր. եւ անիկա վայրն էր ո'չ թէ միայն կրօնական պաշտամունքներու եւ համայնական հաւաքումներու, հապա նաեւ մանուկներու դաստիարակութեան: Բեթսայիդայի մէջ ալ գոյութիւն ունէր այդպիսի ժողովարան մը եւ Պետրոս հոն յաճախելով իր մանկութեան ու պատանեկութեան օրերուն սորված է գրել ու կարդալ եւ ծանօթացած Աստուծոյ խօսքին ու օրէնքին: Հոն լսած է նաեւ մարգարէից խօսքերը Մեսիայի նկատմամբ եւ ոգեւորուած իր ազդի փառաւոր ապագայի յոյսերով (Գործ. Բ. 39, Գ. 20, 21, Յովհ. Ա. 44): Իր կանուխ հասակէն սորված է նաեւ յունարէն: Ինչպէս վերը տեսանք Բեթսայիդա, Կափառնայում եւ շրջակայքը առեւտրական մեծ պողոտային վրայ կը գտնուէին. ուստի հոն կ'ապրէին մեծ ու փոքր առեւտրականներ, ամէն կարգի պաշտօնեաներ ու զինուորներ. անոնց միջոցաւ յունարէն լեզուն տարածուած էր ամբողջ գաւառին մէջ եւ գրեթէ բոլոր բնիկները կը սորվէին զայն առանց մասնաւոր ջանք թափելու, կեանքի պայմաններուն բերումովը: Հետեւաբար Պետրոս ալ կրնար խօսիլ զայն: Յետոյ կրցաւ սորվիլ նաեւ գրել կարդալը այդ լեզուով: Ասոր վկայ են իր երկու թուղթերը, որոնք, նման նոր Կտակարանի բոլոր գիրքերու՝ գրուած են յունարէնով:

Թերեւս իր հայրը՝ Յովնան ձկնորս էր, ինքն ալ նոյն արհեստը սորվեցաւ եւ հաստատուեցաւ

Կափառնայումի մէջ ուր կը բնակէր իր զոքանչին հետ միեւնոյն յարկին տակ (Մարկ. Ա. 29):

Երբ լսեց Յովհաննէս Մկրտիչի քարոզութեան նկատմամբ, իր յոյսերը արծարծուեցան, խորհելով թէ մօտ է Մեսիայի յայտնութիւնը: Ինքն ալ գնաց Յորդանան, մկրտուեցաւ ու դարձաւ Յովհաննէսի աշակերտը: Քիչ ետքը, — երբ դեռ ինքը Գալիլիա՝ իր տունը չէր վերադարձած, — իր եղբայրը կը գտնէ զինքը եւ իրեն կ'ըսէ՝ սրտի անհուն ցնծութեամբ, «Գտանք Մեսիան որ Քրիստոս կը թարգմանուի» (Յովհ. Ա. 41): Կրնանք երեւակայել թէ որքան մեծ բերկրանքով հետեւեցաւ Պետրոս իր եղբոր քայլերուն եւ ներկայացաւ Յիսուսի: Ան Հոգւոյն աչքերով իսկոյն տեսաւ թէ Հայրը Իրեն այժմ տուած է վէմ մը, որու վրայ պիտի կրնայ կանգնել իր եկեղեցին, տեսաւ թէ սատանայի բոլոր յարձակումներուն հակառակ ան հաստատուն պիտի մնայ եւ կրէ հաւատացեալներու խումբը, ինչպէս ապառաժը կը կրէ շէնքը: Ուստի Սիմոնը կոչեց Պետրոս, (յուն. վէմ, քար) Յովհ. Ա. 42:

Այդ խօսքով Յիսուս Պետրոսի խոստացաւ առաքելական գործին ու աշակերտական կոչումին ամբողջ փառքը: Սակայն Յիսուս ատով չուզեց գովել անոր նկարագիրը և կամքի ոյժը, հապա ուզեց ցուցնել թէ ինչե՛ր պիտի կրնայ ընել Պետրոս, ինքզինք ինթարկելով իր առաջնորդութեանը: Ինչպէս որ Յիսուսի տրուած է Քրիստոս անունը եւ ատով Ան տէր կանգնած է եկեղեցւոյն, այնպէս Սիմոնի տրուեցաւ Պետրոս անունը ու ատով անոր յանձնուեցաւ՝ հաւատացեալները հաւաքելու, պահպանելու եւ զօրացնելու գործը:

«Հոս նկարագրուած է նաեւ տարբերութիւնը Պետրոսի եւ Յովհաննէսի: Երկուքին ալ մասնաւոր արտօնութիւն տրուած է: Յովհաննէս ամենէն խոր տեսութիւնը ունի Յիսուսի նկատմամբ եւ շատ մօտ է Անոր սրտին: Բայց Պետրոս զայն կը գերազանցէ իր արտաքին գործունէութեամբը և ազդեցիկ ծառայութեամբը Յիսուսի համար: Յիսուս ոչ թէ Յովհաննէսը՝ հապա Պետրոսը ճանչցաւ իբր այնպիսի անձ մը, որու վրայ ինք պիտի կրնար հաստատել իր եկեղեցին»: S. E. J.

Այս առաջին հանգիստումէն եւ խօսակցութենէն յետոյ՝ Անդրէասի նման Պետրոսի ալ դատումն եղաւ թէ Յիսուսը խոստացեալ Մեսիան է (Յովհ. Ա. 41): Ուստի աշակերտեցաւ Անոր, և ընկերակցելով Անոր՝ վերադարձաւ Գալիլիա: Հոն ինքն ալ ներկայ էր Կանայի հարսանիքին, տեսաւ իր վարդապետին փառքը — Անոր առաջին հրաշ-

քը—եւ աստիճան մը եւս արմատացաւ իր հաւատքին մէջ, աւելի պինդ եւ աւելի ուրախ տըրամագրութեամբ կապուեցաւ Յիսուսի Յփ. Բ. 11:

Կանայէ անցաւ Կափառնայում, իր ընտանիքին քով (Մարկ. Ա. 29): Հոս՝ Յիսուսի աշակերտը ըլլալով հանդերձ՝ ատեն մըն ալ շարունակեց իր նախկին գործը, ձկնորսութիւնը եւ անով ապրեցուց ինքզինքն ու իրենները: Այսպէս՝ երբ օր մ'ալ Գեննեսարէթի ծովակին մէջ իր ուռկանները կը ձգէր, Յիսուս հանդիպեցաւ եւ ըսաւ իրեն ու իր եղբօրը «Իմ ետեւէս եկէք ու ձեզ մարդոց որսորդ ընեմ»: Այս երկրորդ կոչէն Պետրոս ու Անդրէաս հասկցան՝ գէթ մասամբ թէ կարելի չէ երկու Տէրոջ ծառայել, կարելի չէ մէկ կողմէն Քրիստոսի հետեւիլ եւ մարդիկ Անոր առաջնորդելու աշխատիլ, իսկ միւս կողմէն կապել իրենց սիրտը երկրաւոր բարիքներու. ընդհակառակն՝ Յիսուսի աշակերտիլ կը նշանակէ հնազանդիլ Անոր անձնուիրաբար: Ուստի «Շուտ մը ուռկանները թողուցին եւ Անոր ետեւէն գացին»: (Մատթ. Դ. 18):

Տեսնելով անոնց անձնուիրութիւնն ու հնազանդելու յօժարամտութիւնը՝ կ'երևի թէ Յիսուս թուատրեց անոնց՝ դարձեալ երբեմն երբեմն պարապիլ ձկնորսութեամբ, մինչեւ որ երրորդ կոչով մը զանոնք բոլորովին ազատեց իրենց նիւթական հոգերէն ու Իր քովն առաւ: Այս տեղի ունեցաւ հետեւեալ պարագաներու տակ.

Պետրոս եւ Անդրէաս դարձեալ Կափառնայումի քով, Գեննեսարէթի ծովակին եզերքն էին եւ իրենց նաւակին քով ուռկանները կը լուային. մեծ բազմութիւն մը շրջապատած էր Յիսուսը եւ կը փափաքէր Անկէ Աստուծոյ խօսքը լսել: Յիսուս նաւակին մէջ նստելով՝ նախ քարոզեց ժողովուրդին եւ ապա հրամայեց Պետրոսի նաւակը աւելի խորունկը տանիլ եւ ուռկանները անգամ մըն ալ շուրջ ձգել: Պետրոս իր եղբօրը հետ ամբողջ գիշերը աշխատած էր, բայց յաջողած չէր բան մը բռնել և՛ իբր փորձառու ձկնորս՝ գիտէր թէ ցորեկը բոլորովին աննպաստ էր ձկնորսութեան համար: Սակայն Յիսուսի հրամանին հնազանդեցաւ եւ Անոր «Խօսքին համար» ուռկանը ձգեց: Արդիւնքը հրաշալի էր, բռնուած ձուկերու առատութենէն «Ուռկանը կը պատռէր»:

Այս դէպքէն Պետրոս ըմբռնեց ու զգաց նախ թէ գերբնական ոյժ մը, Աստուծոյ մասնաւոր գործութիւնը ներկայ է Յիսուսի մէջ. տեսաւ նաեւ թէ Ան Աստուծոյ Սուրբն է, իսկ ինք... «Մեղաւոր մարդ մը»: Իր և Անոր միջեւ խոր անդունդ մը, անհուն տարբերութիւն մը կայ: Ուստի ինքը

Քրիստոսի մտերիմ հաղորդակցութիւնը, բարեկամութիւնը պիտի վայելէ ոչ թէ իբր իրաւունք իր առաւելութեանց համար, հապա իբր ձրի շնորհքը Անոր, որ մեղքը կը ծածկէ, կը ներէ եւ մեղաւորը Իրեն կը կապէ: Երկրորդ՝ Պետրոս այս հրաշքի միջոցաւ գիտակցեցաւ թէ Յիսուսի համար իր ընելիք գործը ապարդիւն պիտի չըլլար: Անոր հրամանին անսալով ինքը յաջողած էր նմանը չտեսնուած որս մը ընել: Հիմա նոյն Յիսուսն էր որ զինքը աւելի վսեմ պաշտօնի մը, մարդոց որսորդ ըլլալու կը կանչէր: Ուստի կը հաւատար թէ Ան իրեն պիտի գործակցէր աւելի մեծ գործութիւնով, որպէսզի իր աշխատանքը պտղաբեր ըլլար, և որպէսզի ինք կարենար շատ մարդիկ իր ուռկանը ձգել եւ իր Տէրոջ առաջնորդել:

Այս վստահութեամբ Պետրոս այժմ վերջնաւ կանօրէն ամէն բան թողուց եւ Անոր ետեւէն գնաց: Իր եւ իրեններուն ապրուստի հոգն ալ Անոր ձգեց, քանզի հիմա գիտէր թէ Անոր հրամանին կ'անսան ծովու ձուկերը եւ երկինքի թռչունները:

Այս երեք կոչերով Պետրոս մտաւ Յիսուսի դպրոցը: Յաջորդիւ պիտի տեսնենք թէ անիկա հոն ինչպէս հետզհետէ կը թուեցաւ եւ պատրաստուեցաւ իր գործին համար:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԿՈՄՍ ՅԻՆՅԷՆՏՈՐՖ

ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Համալսարանական ընթացքը աւարտելէ յետոյ՝ Յինցէնտորֆ ուսումնասիրական ճամբորդութիւն մը ըրաւ որպէսզի իր մտքին հորիզոնը աւելի ընդարձակի: Շատ մը քաղաքներու կարգին այցելեց նաեւ Տիւսելտորֆ: Հոն՝ պատկերասրահին մէջ հանդիպեցաւ նկարի մը, որ Փրկչին չարչարանքը կը պատկերացնէ եւ որուն ստորտը գրուած է, «Չայս ըրի քեզի համար, դուն ի՞նչ կ'ընես ինծի համար»: Նկարը խոր ազդեցութիւն ձգեց երիտասարդ կոմսին վրայ: Երկար կանգնեցաւ անոր առջեւ՝ ընկղմած խոր խորհրդածութեան եւ զգացման մէջ եւ աւելի նուիրուեցաւ Տէր Յիսուս Քրիստոսի: Այս նուիրումը զինքը պահեց շատ մը անկումներէ, որոնք կ'ըսպառնան ճամբորդութեան մէջ իրեն նման երիտասարդներու:

Տիւսէլտորֆէն անցաւ Հոլանտայի Ութրեխթ քաղաքը, ուր երեք ամիսի չափ ունկնդրեց համալսարանի իրաւաբանական դասախօսութիւններուն եւ հետեւեցաւ անդլիարէն դասընթացքի: Միեւնոյն ատեն եռանդով կը կարդար աստուածաբանական եւ հոգեւոր գրութիւններ: Իսկ կիրակի օրերը կը զործածէր մինակ իր ներքին մարդուն շինութեանը համար:

Հոլանտայի մէջ ծանօթացաւ շատ նշանաւոր մարդոց ու հռչակաւոր գիտնականներու եւ փորձառու եղաւ թէ՛ անկեղծ եւ եռանդուն հաւատացեալներ կը գտնուին ոչ թէ միայն լուտերական եկեղեցւոյ երկու խմբաւորումներուն — ուղղափառներուն ու փիէթիսթներուն — հապա նաեւ բարեկարգեալ (կալվինական) եկեղեցւոյ մէջ: Յինցէնտորֆ նշմարեց թէ ասոնց ամենուն մէջ ալ՝ հակառակ շատ մը տարբերութեանց՝ բան մը հասարակաց էր. այդ էր աղօթքի յարաբերութիւնը Քրիստոսի հետ: Ուստի սիրով ծունկի կուգար անխտիր թէ՛ լուտերական եւ թէ՛ բարեկարգեալ ճշմարիտ քրիստոնեաներու հետ:

Ութրեխթէն յետոյ պատեցաւ Հոլանտայի ուրիշ մի քանի քաղաքներն ալ եւ ապա անցաւ Պրուքսէլ եւ անկէ Փարիզ: Հոն կէս տարի մնաց. կէսօրէ առաջ ժամանակը կը զործածէր մարմնակրթանքի, իսկ ետքն ալ՝ ֆրանսերէն ու իրաւաբանութիւն ուսանելու:

Այն տարիներուն Ֆրանսայի թագաւորն էր Լուի ԺԵ. զեռ 9 տարեկան մանուկ մըն էր ու կը գտնուէր խնամակալութեանը տակ Օրլէանի դուքսին, որուն մայրը ծագումով գերմանուհի մըն էր: Ասոր միջնորդութեամբ Յինցէնտորֆ յարաբերութիւն հաստատեց արքունիքի անդամներէն եւ ազնուական դասէն շատ մը անձնաւորութեանց հետ: Բայց հոս ալ իր նպատակն էր Յիսուսը փառաւորել: Ըսած է, «Աշխարհի մեծերէն կ'ընտրէի միայն այն մարդիկը, որոնց կարող էի իմ Փրկչիս շնորհքը գովաբանել: Այդպիսիներու հանդիպեցայ նոյնիսկ հոն, ուր զանոնք գտնել յաճախ անկարելի կը թուի»:

Շփման եկաւ նաեւ կաթոլիկ բարձրաստիճան կրօնաւորներու հետ: Անոնց մէջ յաճախ տեսաւ բաներ, որոնք իրեն զգուանք կ'առթէին: Սակայն երբեմն հանդիպեցաւ նաեւ կղերականներու, որոնք Յիսուսը սրտանց կը սիրէին: Չէր քաշուեր ատոնց հետ բարեկամութիւն հաստատելէ, վասնզի իրեն աւելի կարեւոր կը թուէր Փրկչին կտակին համաձայն Ասոր աշակերտները սիրելը քան թէ նկատողութեան առնել բաժանում ձեռնդ պարիսպները, զորս մարդկային անկատար

ու խափանելի գիտութիւնը կանգնած է: Ասով հանդերձ Յինցէնտորֆ իր (լուտերական) եկեղեցւոյ դաւանանքին հանդէպ ալ անտարբեր չէր: Ան կատարեալ պաղարիւնութեամբ կը դիմադրէր բոլոր փորձերուն, որոնց նպատակն էր զինքը կաթոլիկ եկեղեցւոյ գիրկը տանիլ:

Այդ փորձերը եղան մասնաւորաբար Փարիզի արքեպիսկոպոսին, կարտինալ տը Նուայէի կողմէն որ հեղահամբոյր եւ քաղցրաբարոյ ծերուկ մըն էր եւ որ Յինցէնտորֆի հետ կը յարաբերէր շատ բարեացակամօրէն: Բայց բոլոր վիճաբանութիւններն ու ջանքերը ապարդիւն անցան: Կարտինալը տեղի տուաւ եւ սկսաւ Յինցէնտորֆը սրտանց սիրել, ոչ թէ այլեւս այն յուսով թէ ինքը պիտի կարենար զայն կաթոլիկ եկեղեցին դարձնել, հապա այն գիտակցութիւնով թէ ան Աստուծոյ մէկ զաւակն է, թէեւ լուտերական եկեղեցւոյ կը պատկանէր:

Սակայն այդ մտերիմ յարաբերութիւնը կարճ կեանք ունեցաւ եւ պատճառը հետեւեալն է.—

Կարտինալը իր խղճովը չէր կրնար համաձայնիլ Պապի մէկ կոնդակին, կը բողոքէր անոր դէմ երկար ատեն, բայց երբ Պապը զինք բանադրել սպառնաց եւ Ֆրանս. կառավարութիւնն ալ բռնի միջոցներու դիմեց, կարտինալը տեղի տուաւ՝ անտեսելով իր խիղճը: Այս արարքէն խորապէս վշտացած Յինցէնտորֆ վճռեց այլեւս չի յարաբերիլ կարտինալի հետ: Անոր գրեց, «Ասով Ձեզի ընդմիջտ մնաք բարի կ'ըսեմ, քանի որ իմ աչքերս այլեւս Ձեզ չպիտի տեսնեն այս ողբալի ստորագրութենէն յետոյ... Հաւատացէ՛ք թէ ես Ձեզ կը սիրեմ անհունա, կը յարգեմ ճշմարտապէս եւ Ձեզմէ հրաժեշտ կ'առնեմ ամենաըզգայուն վիշտովս»:

Այս դէպքէն կը հասկցուի թէ քսանամեայ Յինցէնտորֆի համար ճշմարտութիւնը աւելի գերադաս էր քան թէ բարձր տիտղոսներու արժանացած բարեկամ մը: Կը հասկցուի նաեւ թէ որքան դժուար է աշխարհի մէջ բարձր պաշտօնի տէր անձնաւորութեան մը իր խիղճը անարատ պահել:

Ասկէ քիչ ետք Յինցէնտորֆ բաժնուեցաւ Փարիզէն եւ Զուիցերլոյ վրայէն անցաւ Գերմանիա: Հոն՝ այցելեց նախ իր հօրաքրոջ, որ կը բնակէր Վիւրցպուրկ քաղաքին մօտակայքը՝ Այս ընտանիքին մէջ հանդիպեցաւ աղջկան մը, որու կապուեցաւ շերմ սիրով: Սակայն քիչ ետք տեսաւ թէ Տէրոջ կամքին համաձայն չէր այս ընտրութիւնը. օրիորդը չպիտի կրնար նեցուկ ըլլալ այն մեծ զործին մէջը, զոր ինք մտադրած

էր ընել իր Փրկչին համար: Ուստի խաչեց իր բնական հակամիտութիւնը եւ հրաժարեցաւ իր սիրելիէն սրտի մեծ կսկիծով:

XXX

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ՍԱՄՈՒԷԼ

Շար. Գ. ԹԻԼԷՆ

ՍԵԼՈՎ

(Կարդալ Ա. Թադ. Բ. 12—Գ. 10)

Ըսինք թէ Աստուծոյ էր որ Աննա յանձնեց իր զաւակը. բարբաղդաբար Աստուծոյ՝ եւ ոչ թէ ծեր Հեղիի:

Հեղիի տունը՝ մարդկային տեսակէտով Սամուէլի դաստիարակութեան համար ամենէն անյարմար միջավայրն էր: Մէկ կողմէն երկու երիտասարդներ որոնց վարքը «Չար» կոչուելու աստիճան գէշ էր, (Բ. 12), միւս կողմէն հայր մը այնքան թոյլ, անոնց յանցանքներուն այնքան աչք գոցող, որ «Իր որդիները Աստուծոյ աւելի փառաւորելու» աստիճանին հասած էր, (Բ. 29): Ո՛վ պիտի համարձակէր հանդարտ խղճմտանքով այդպիսի տուն մը յանձնարարել ընտանիքի մը իր տղոցմէ մին հոն դնելու: Անկասկած Աննա այս պարագաները գիտէր. բայց պարագաները չկրցան զինքը իր ուխտը կատարելէ արգիլել: Անիկա Հեղիի վրայ շատ յոյս չդնէր, ան չըսէր, «Չաւակս քեզի կը յանձնեմ», հապա, «Ես... զանիկա Տէրոջը փոխ կուտամ. անիկա իր բոլոր կեանքին մէջ Տէրոջը փոխ տրուած ըլլայ», (Ա. 28): Մանուկը այնուհետեւ սուրբ աւանդ մըն է, Հեղի անոր դպչելու իրաւունք չունի, եթէ ոչ միայն իր կարելիութեան սահմանին մէջ զայն պաշտպանել այն անկումներէն՝ որոնցմէ չէր կրցած պահել իր սեփական զաւակները:

Նկատի առած էք թէ Սուրբ Գիրքը որքան քիչ բան կ'ըսէ Սամուէլի մանկութեան տարիներուն վրայ: Որքան լուռ կ'անցնի այն մանկական բանգիտութեանց կամ առաքինութեանց վրայէն՝ զորս վէպեր գրողները կը սիրեն պատմել, ոչ իսկ բարեպաշտութեան սքանչելիք մը պատմուած է հոս: Առաջին անգամ Աստուծոյ ձայնը լսելուն՝ կը տեսնենք թէ Սամուէլ զայն չճանչնար անգամ: Մեր դարու գաղափարներուն համեմատ՝ Սամուէլի օրերը յուսահատ միօրի-

նակութեամբ մը անցնելու էին: Անիկա «Հեղիի առջեւ Տէրոջը ծառայութիւն կ'ընէր»: Միայն այսչափը ըսուած է, եւ կ'երեւի թէ ասկէ զատ ընելիք բան մը չկար, որովհետեւ այս խօսքը 3 անգամ կրկնուած է (Բ. 11, 18, Գ. 4): Ի՞նչ ծառայութիւններ կրնար մատուցանել այս մանուկը: Թերեւս սրբարանին կանթեղները մաքրել եւ պատրաստել, տաճարին դռները բանալ եւ գոցել (Գ. 15), զոհերուն վերաբերեալ քանի մը նիւթական գործերուն մէջ Հեղիի օգնել, անկասկած նաեւ սորվիլ եւ արտասանել օրէնքը:

Այո, Սամուէլ կը ծառայէր խոնարհաբար, խաղաղիկ եւ անուշիկ: Եւ գիտէ՞ք նա այս համեստ աշակերտութենէն ինչ սորվեցաւ—«Տէրոջը ու մարդոց հաճոյ ըլլալ» (Բ. 26): Բարեկամներս, մարդիկ ձեր մասին ալ այսպէս վկայութիւն մը կրնա՞ն տալ: Կը ջանա՞ք Աստուծոյ հաճոյ ըլլալ, թէ ոչ կը բաւականաք միայն հոսանքին հետեւելով եւ մարդոցմէ գովասանք ընդունելով: Երիտասարդ քրիստոնեաներ, մարդոց հաճոյ ըլլալու ալ ջանք կ'ընէ՞ք. ոչ թէ զանոնք շողոքորդելով, հապա «Պատուելու մէջ իրարմէ անցնելով եւ խնդացողներուն հետ խնդալով ու լացողներուն հետ լալով» (Հռով. ԺԲ. 10, 15): Ձեր ծնողաց, ձեր եղբայրներուն ու քոյրերուն հաճելի ըլլալը պարտք կը համարի՞ք, թէ ոչ կը խորհիք թէ ասոնք ձեր պարտքէն վեր գործեր են եւ թէ աղշիկ մը որ լաւ բարք ունի, կամ տղայ մը որ բարոյապէս մաքուր կ'ապրի՝ կատարեալ իրաւունք ունի տան անդամներուն դէմ խիստ լեզու գործածել: Աստուծոյ խօսքը կ'ըսէ թէ դուք պէտք է «Հաճոյ» ըլլաք: Սամուէլի ձեզի տուած օրինակն է այս: Անիկա մանաւանդ օրինակն է Այն Միւս Մանկան՝ որու հետ Սամուէլ այնքան նմանութիւններ ունի. «Յիսուս... հընազանդ էր իր ծնողաց... եւ կը զարգանար իմաստութիւնով ու հասակով, եւ Աստուծոյ ու մարդոցմէ շնորհք գտնելով» (Ղուկ. Բ. 51, 52):

Ասկէ աւելին կայ: Հնազանդութիւնը Սամուէլը Աստուծոյ հետ խօսակցութեան մը արժանացուց: Յայտնութիւն մը, որու նմանը ոչ իր ժամանակակիցներէն մէկուն, եւ ոչ ալ Իսրայէլի մէջ իր անդրանիկներուն շնորհուեցաւ: Այժմ կանգ առնենք այս նոր տեսարանին առջեւ:

*
* *

«Այն օրերը Տէրոջը խօսքը հազուադիւս էր ու յայտնի տեսիլք չկար» (Գ. 4): Մարդիկ գէշ աղէկ կ'ապրէին աեսակ մը հոգեւոր թմրութեան մէջ՝ որու վրայ քիչ թուով հաւատացեալներ զի-

տէին ողբալ: Հեղի իր կրկնակի պաշտօնները, դատաւորութիւնն ու քահանայութիւնը կատարելապէս վարկաբեկած էր: Արդէն անծանօթ մարդարէ մը եկած և Տէրոջը կողմէ անոր տանը դէմ սարսափելի դատաստաններ տուած էր (Բ. 27-36): Բայց կ'երեւի թէ այս սպառնալիքները մեծ բարեփոխութիւն յառաջ չէին բերած: Զաւակները միշտ ալ չարութեան մէջ կը շարունակէին, իսկ հայրը միշտ թուական ներող էր անոնց:

Գիշերը մը՝ ծերունի Հեղի եւ Սամուէլ մանուկը կը քնանային: Կը խորհիմ թէ անոնք Տէրոջը տան մօտը յարկաբաժին մը ունէին: Արշալոյսը ծագելու մօտ էր, քանզի ըստ Սուրբ Գրոց «Աստուծոյ կանթեղը տակաւին մարած չէր»: Հա՞րկ է ըսել բարեկամներս, թէ գիշերուան այս վերջին ժամուն մարդ որքան լաւ կը քնանայ: Այս խոր քունին մէջ ընկղմած էր Սամուէլ՝ երբ յանկարծ իր անունին կանչուելը զայն արթնացուց: Չեմ գիտեր թէ իր տեղը դուք ի՞նչ պիտի ընէիք. բայց Սամուէլի ըրածին չէ՞ք հիանար: Սոսանց դանդաղելու, առանց խորհելու «Երա՞զ է թէ իրականութիւն», առանց ինքզինքին ըսելու թէ ելլելու համար դեռ շատ կանուխ է, նա Հեղիի քով կը վազէ եւ ուրիշ ձայնի չկասկածիր: Այնքան պարզուկ, այնքան սիրուն բան մը կայ այս մանկան ծերունիին ուղղած խօսքերուն մէջ. «Ահա հոս եմ, քանզի զիս կանչեցիր». անմիջապէս գալէ զատ ուրիշ բան կրնամ ընել, երբ իմ հայրագիրս զիս կը կանչէ»: Ո՛հ, թէ կարենայինք այս «քանզի»ին զօրութիւնը հասկնալ: Անիկա միշտ իբր շողկապ կը ծառայէ աշակերտին պատասխանը վարդապետին կոչին կապելու: Այսու հանդերձ Սամուէլի քաղցր հնազանդութիւնը դեռ փորձի կ'ենթարկուի: Հեղի կը պատասխանէ, «Որդեակ իմ, ես չկանչեցի, դարձիւր պառկէ»: Մի գարմանաք որ Սամուէլ Տէրոջը ձայնը չճանչցաւ: Հեղի անգամ՝ Աստուածային բաներուն մէջ փորձառու ծեր քահանան՝ ի սկզբան բան չի հասկնար մինչեւ երրորդ անգամը, որմէ յետոյ նա մանկան կը պատուիրէ եկած կոչին պատասխանել:

Տէրը նորէն կուգայ: Անիկա մանուկին ըսելիք ունի: Սամուէլ կը փութայ ըսել, «Խօսէ Տէր, քանզի քու ծառադ մտիկ կ'ընէ»: Սամուէլի ամբողջ կեանքը այս քանի մը բառերուն մէջ ամփոփուած է: Ապագային որքան մեծ ալ եղաւ իր հեղինակութիւնը՝ նա ոչ մէկ ատեն իր անձնական տեսակետները, իր անձնական գաղափարներն ու փափաքները, ո՛չ ժողովուրդին եւ ոչ ալ թագաւորին չպարտադրեց: Վճիռները միայն եւ

միայն Աստուծոյ խօսքին կը թողուր: Ինքը այն Գերագոյն Տէրոջ ծառայ մը միայն եղաւ: Եւ որովհետեւ ինք իր ընթացքը Տէրոջը խօսքը կատարեալ յարգանքով մտիկ ընելով սկսաւ, նա յետոյ կարող եղաւ այդ խօսքը մեծ զօրութեամբ ուրիշներուն ալ քարոզել: Երբ Իսրայէլ եկաւ եւ իրմէ թագաւոր մը ուզեց՝ ինք նախ մերժեց, եւ արդար բարկութեամբ մը բողոքեց այս խնդրանքին դէմ, որ ուղղակի Աստուծոյ թագաւորութիւնը կը հարուածէր: Բայց երբ Աստուած աւնոր ըսաւ, «Ժողովուրդին խօսքը մտիկ ըրէ» (Ը. 7) նա հնազանդեցաւ: Երբ դատապարտուած եւ մերժուած Սաւուղի վրայ նա ամենէն անկեղծ արցունքները կը թափէր, Աստուած անոր հրամայեց երթալ պատանի հովիւ մը օծել, հընազանդեցաւ թէ և Դաւիթ արտաքին ռեւէ հրապուրիչ բան մը չունէր թագաւոր ըլլալու, եւ թէ եւ զիտէր թէ այդպէս ընելով ինքզինքը Սաւուղի բարկութեան կ'ենթարկէր: Մինչեւ իր ծերունագարդ տարիքը, նա իր մանկութեան ատեն սկըսած նշանաբանէն ուրիշ՝ նշանաբան չունեցաւ: «Խօսէ Տէր, քանզի քու ծառադ մտիկ կ'ընէ»:

Բարեկամս, կ'ուզե՞ս այս խօսքը քու կեանքիդ ալ նշանաբան ընել: Աստուած այսօր ալ կը խօսի մեզի: Կը խօսի բնութեան միջոցով, որոտումով կամ մեղմ գեփիւռով, արեւին փառաւոր ծագելովն ու մարը մոտնելովը, անտառի մը վեհ լուծեամբը, առուակի մը կարկաչովը, ծառի տերեւներուն խշրտուքովը, այո՛, «Երկինք Աստուծոյ փառքը կը պատմէ, ու երկինքի հաստատութիւնը Անոր ձեռքերուն գործելը կը ցուցնէ... չկայ զրոյց ու չկան խօսքեր... բայց ամէն երկիր ելաւ անոնց հնչիւնը», (Սաղ. ԺԺ. 1-4): Աստուած կը խօսի խղճմտանքներու միջոցաւ, եթէ միայն մէկուն խղճմտանքը խանձուած չէ: Աստուած կը խօսի Ս. Գրքի միջոցաւ: Ամէն անգամ որ Ս. Գրքը կը բանանք, պէտքը ունինք ըսելու, «Խօսէ Տէր, քանզի Քու ծառադ մտիկ կ'ընէ»: Ինչ որ կը պակսի Աստուծոյ ձայնը չէ, հապա մտիկ ընող ականջ, հոգիներ՝ որոնք յօժարին Աստուծոյ հետ առանձնանալ եւ Անոր մըտիկ ընել: Ինչ որ կը պակսի՝ երիտասարդներ են՝ որոնք կամք ընեն իրենց ուշադրութիւնը հաճոյքի, ըսի-ըսանքերու, կարծիքներու, շողոքորդութեան և փառասիրութեան ձայներէն Աստուծոյ դարձնել եւ անկեղծ ու հնազանդելու պատրաստ սրտով ըսել, «Խօսէ, Տէր, քանզի...»:

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN, 39, Rue St.-Savournin - Marseille